

Հաստատված է

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան»

հիմնադրամի գիտական խորհրդի

2017թ. հունվարի 30-ի նիստում

Գիտական խորհրդի նախագահ _____ Ս. Մինասյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«ՇԻՐԱԿԻ Մ.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՍԻ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ

ՈՒՍՈՒՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ

Սույնով սահմանվում է «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի /այսուհետ՝ ՇՊՀ/ մագիստրատուրայի ընդունելության և ուսումնառության կանոնակարգը /այսուհետ՝ կանոնակարգ/:

- 1.1. Մագիստրատուրան բարձրագույն մասնագիտական կրթության համակարգի կրթական աստիճան և բարձր որակավորում ունեցող կադրերի պատրաստման ձև է:
- 1.2. Մագիստրատուրայում կարող է սովորել ՀՀ պետական և հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի և կամ էլ մագիստրոսի աստիճան ունեցող անձը: Այլ պետությունների բուհերի շրջանավարտների ընդունելությունը մագիստրատուրա կատարվում է միջպետական և միջգերատեսչական պայմանագրերի կամ համաձայնագրերի հիման վրա՝ լրացուցիչ տեղերի հաշվին, ինչպես նաև վճարովի հիմունքներով՝ սեփական նախաձեռնությամբ:
- 1.3. Սույն կարգի իրավական հիմքերն են ՀՀ Սահմանադրությունը, «Կրթության մասին ՀՀ օրենքը», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը, ՇՊՀ կանոնադրությունը, ՀՀ ԿԳ նախարարի՝ 2007 թ. դեկտեմբերի 6-ի թիվ 1193-Ն հրամանով հաստատված «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգը»:

2. ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

- 2.1. ՇՊՀ-ի մագիստրատուրայում ընդունելությունը կազմակերպվում է ըստ մասնագիտությունների՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցման (անվճար) և ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման (վճարովի) հիմունքներով՝ հաստատված կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից:
- 2.2. Բուհի կողմից զանգվածային լրատվության միջոցներով տրվում է հայտարարություն՝ ընդունելության մասնագիտությունների, տեղերի և կանոնների վերաբերյալ:
- 2.3. Մագիստրատուրայի ընդունելությունը կազմակերպելու նպատակով ռեկտորի հրամանով ձևավորվում է դիմորդների փաստաթղթերն ընդունող հանձնաժողով:
- 2.4. Մագիստրատուրայի ընդունելությունը կազմակերպելու և անցկացնելու համար ռեկտորի հրամանով և նախագահությամբ ձևավորվում է ընդունող (մրցույթային) հանձնաժողով՝ պրոռեկտորների, ֆակուլտետների դեկանների, մասնագիտական ամբիոնների վարիչների և ուսումնամեթոդական գործընթացի կառավարման ու գործատուների հետ համագործակցության կենտրոնի՝ մագիստրատուրայի ուսուցման գործընթացի պատասխանատու- մասնագետի անդամակցությամբ:
- 2.5. Ընդունող (մրցույթային) հանձնաժողովը, ֆակուլտետի ու մասնագիտական ամբիոնի կարծիքը հաշվի առնելով, ուսումնասիրում և քննարկում է դիմորդների ներկայացրած փաստաթղթերը, կազմում մրցույթի հավակնորդների անվանական ցուցակ և իրականացնում է մրցույթ:

Համալսարանի ռեկտորը ընդունող հանձնաժողովի ներկայացրած արձանագրությունների հիման վրա հրամանագրում է մրցույթային հիմունքներով մագիստրատուրա ընդունված դիմորդներին տվյալ կիսամյակի վարձը վճարելուց հետո:

3. ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Մագիստրատուրայի ընդունելությունը կատարվում է 2 փուլով.

- 3.1. Ըստ մասնագիտությունների մագիստրատուրայի ընդունելությունն առաջին փուլով անցկացվում է ՀՀ կառավարության հաստատած՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար)՝ պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքով և առանց պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքով ուսուցման տեղերով:
- 3.2. Առաջին փուլով անվճար համակարգ կարող են դիմել բուհի բակալավրիատի և դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճան ունեցող շրջանավարտները:

Առաջին փուլով մագիստրատուրայի ընդունելության համար պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքով ուսուցման տեղերի դիմորդների փաստաթղթերի ընդունումը և մրցույթը կատարվում են ընթացիկ տարվա հունիսի 1-ից մինչև հունիսի 4-ը:

Առաջին փուլով մագիստրատուրայի ընդունելության համար առանց պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքով ուսուցման տեղերի դիմորդների

փաստաթղթերի ընդունումը կատարվում է ընթացիկ տարվա հունիսի 5-ից մինչև հունիսի 20-ը, իսկ մրցույթը՝ մինչև հունիսի 30-ը:

3.3. Ըստ մասնագիտությունների մագիստրատուրայի ընդունելությունը երկրորդ փուլով անցկացվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հաստատված ուսման վարձի մասնակի զեղչի կիրառմամբ (վճարովի), առանց պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքի ուսուցման տեղերով:

3.4. Երկրորդ փուլով անվճար (կրթության և գիտության նախարարության հատկացրած ԲԶ տեղերի շրջանակներում) և վճարովի համակարգ կարող են դիմել ՀՀ ազգային բանակից զորացրվածները:

3.5. Մագիստրոսի աստիճան ունեցող քաղաքացիները մագիստրոսական 2-րդ կրթություն կարող են ստանալ միայն վճարովի հիմունքներով:

Երկրորդ փուլով մագիստրատուրայի ընդունելության համար փաստաթղթերի ընդունումը կատարվում է ընթացիկ տարվա օգոստոսի 15-ից մինչև օգոստոսի 25-ը:

2-րդ փուլով մագիստրատուրայի ընդունելության մրցույթն անցկացվում է ընթացիկ տարվա օգոստոսի 25-ից մինչև 31-ը:

3.6. Մագիստրատուրայի ընդունելության մրցույթն անցկացվում է հետևյալ չափանիշների առաջնահերթությամբ.

- 1) նախորդ ուսումնառության մասնագիտության համապատասխանության դեպքում՝ ցուցաբերած ընդհանուր առաջադիմության գումարային միջին գնահատականով կամ միջին որակական գնահատականով,
- 2) մասնագիտական առարկաներից ցուցաբերած առաջադիմության գումարային միջին գնահատականով կամ միջին որակական գնահատականով,
- 3) ավարտական աշխատանքի կամ առարկայական ամփոփիչ քննական գնահատականներով,
- 4) տպագրված կամ տպագրման ընդունված գիտական աշխատությունների, թեզիսների և զեկուցումների առկայությամբ,
- 5) ոչ մասնագիտական առարկաներից ցուցաբերած առաջադիմության գումարային միջին գնահատականով կամ միջին որակական գնահատականով:

3.7. Մագիստրատուրա ընդունվելու համար դիմումը տրվում է համալսարանի ռեկտորի անունով (լրացվում է տեղում)՝ կցելով հետևյալ փաստաթղթերը՝

▪ բակալավրի, դիպլոմավորված մասնագետի, մագիստրոսի դիպլոմի և դրա հավելվածի (միջուկի) պատճենները (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ իրենց կրթության համարժեքության մասին),

- ինքնակենսագրություն,
- 4 լուսանկար (3x4 չափի),
- հրատարակված կամ հրատարակման ընդունված գիտական աշխատությունների ցուցակ (դրանց առկայության դեպքում),
- սահմանված արտոնություններին վերաբերող այլ փաստաթղթեր:

3.8. Բուհը մագիստրոսի հետ կնքում է պայմանագիր, որի տեքստը նախապես տրամադրվում է դիմորդին:

4. ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅՈՒՄ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

4.1. Մինչև սեպտեմբերի 25-ն ընկած ժամանակահատվածում հրամանագրված, սակայն դասերի չհաճախելու պատճառով թափուր մնացած անվճար և վճարովի ուսուցման համակարգի տեղերը համալրվում են՝ ըստ մրցույթի չափանիշներով հաջորդը համարվող շրջանավարտների տվյալների:

4.2. Մագիստրոսները բուհի աշխատողների հետ հավասարապես օգտվում են գիտական սարքավորումներից, լաբորատորիաներից, համակարգչային տեխնիկայից, գրադարաններից, հանրակացարաններից և այլ հնարավորություններից:

4.3. Մագիստրոսի կրթական ծրագրով ուսումնառությունն ավարտած և ամփոփիչ ատեստավորում անցած անձանց տրվում է բուհի ավարտական փաստաթուղթ (մագիստրոսի դիպլոմ)՝ համապատասխան ներդիրով:

